կան մի ընտանիք կայ և Թիֆլիսից տարին մի անգամ պատարագ է դալիս հաղորդութիւն տալու և հոգևորապէս մխիթարելու։ Բաղրքական համայնքը իւր պատարագին միջոց է տալիս այդպէս բարեխիղճ լինելու դէպի իւր պարտքը։ Ո՞ւրախի հակադրութիւն։ Լրագրական տէս հերոսները այս վերջին հակադրութիւնը կարդալով դարձեալ Մայր Աթոռի նորա սպասաւորութեան ապիկարութեան մասին կրոնական իրենց մտքում՝ այն ինչ այդ տարբերութիւնը 50 հոգուց բաղկացած մի դասակարգից չէ կախուած՝ այլ ամբողջ եկեղեցուց։ Բայց եկեղեցին կուսակրօն հոգևորականութիւնը չէ միայն՝ այլ նորա քահանայութիւնը՝ դիւղացիք՝ վաճառականները՝ արհեստաւորները՝ ամբողջ հայ ժողովուրդը։ Նաև բան է կախուած եկեղեցու վարչութիւնից՝ բայց ոչ պակաս նշանակութիւն ունի և մեր ժողովրդի սէրը՝ հաւատարմութիւնը դէպի եկեղեցին և քրիստոնէական գործը։ Մեր ժողովրդի ամբողջութիւնը պէտք է կենդանանայ Հայաստանեայց եկեղեցու և քրիստոնէութեան համար։ ահա ի՞նչ պէտք է լինի լրջմիտ հայի ձգտումն ու տենչը։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ա. Հայրապետի հեռագիրը Պարսից Շահին և պատասխանը։

ԹԷՀՐԱՆ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ

ԻՐԱՆԻ **ՄՕԶԱՖՓԱՐ-ԷԴԴԻՆ** ՇԱՀՆՇԱՀԻ

Ի մուտս Նոր տարւոյ Նորոյ շնորհաւորեմք զՁերդ Բրքայական Մեծութիւն՝ աղօթելով առ Ամենակալ Աստուած յաղագս երկարակեցութեան և քաջառողջութեան Վեհափառ Ինքնակալիդ և համայն արքայական տան՝ ի փառս և ի պարծանս Իրանի և յերջանկութիւն համայն հպատակաց Ձերոց՝ որոց հայր էք ողորմած և սիրելի։

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս ամենայն Հայոց

Տ ֆ ֆ ։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ **ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սրտագին են շնորհակալիք իմ յաղագս բարեմաղթութեանց Սրբութեան Ձերոյ յաւուրս Նոյրուզի։ Նոյն և ես մաղթեմ՝ զի պահպանեսցէ Աստուած զթանկագին աւուրդ կենաց Ձերոց։ Ընմոռանալի կան և մնան յիս յիշողութիւնք այցելութեան իմոյ Էջմիածին։

ՄՕԶԱՖՓԱՐ-ԷԴԴԻՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԴԱՐՁԸ ՏՓԽԻՍԻՑ

Մարտի 23-ին Հոգևոր Տ.ը բարեհաճեցաւ վերադառնալ վերջին ճանապարհորդութիւնից իւր Ամենաբարձր Սրբութիւնից։ Մի օր առաջ Ելենովկայից եկած հեռագրից յետոյ՝ տեղապահ Տ. Աբրահամիս արքեպիսկոպոսը և համայն Միաբանութիւնը ձեռնարկեց Հայրապետի ընդունելութեան կարևոր պատրաստութիւնները տեսնել։ 23-ին վաղ առաւօտեան ընդ առաջ եկան Մինոգական Սրբազան Հաքը՝ Տ. Տ. Գարեգին և Կարապետ վարդապետք՝ որոնք Հոգևոր Տիրոջ դիմաւորեցին Էջմիածնայ կայարանում և այնտեղ միանալով Հայրապետի շքախմբի հետ՝ նոյն օրը հասին Երևան։ Թեմի Առաջնորդարանում Վեհը առ ժամանակ հանգիստ առաւ և ընդունեց քաղաքի պատուաւոր անձանց՝ թեմական դպրոցի ուսուցչական խմբին և հոգևորականներին։ Նոյն օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ գալ Մ. Աթոռ ի Ս. Էջմիածին՝ ուր համայն միաբանութիւնը՝ ձեմարանի աշակերտութիւնն ու ուսուցչական ամբողջ կազմը և Վաղարշապատի հասարակութիւնը մեծ դրան առաջ եկեղեցական թափորով սպասում